

343

L-22

34

Լ-22

Ժողովրդասեր գրական
ՅԵՎ
Ժողովրդասեր սենսակի
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա. Վ. ԼԱՊՏԵՎ

ՀԱՆՑԱԿԱԶՄԸ
ՅԵՎ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎՈՐԱԿՈՒՄԸ

Ի. Տ. ԳՈՒՅԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

343
Լ-22

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱՆՆ ԽՈՂ ԱՐԴՅՈՂԿՈՄԱՅԻ
ՅԵՐԵՎԱՆ ● 1940

01 MAR 2010

ԽՈՂ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՂԿՈՄԱՏԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԱՏԱՎՈՐԻ ՑԵՎ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՏԵՆԱԿԱԼԻ
ԳՐԱԳԱՐԱՆ

343
E 92 w

Ա. Վ. ԼԱՊՏԵՎ

ՀԱՆՑՈՒԿԱԶՄԸ

ՑԵՎ

ՔՐԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎՈՐԱԿՈՒՄԸ

Ի. Տ. ԳՈՒՅՄԱԿՈՎԻ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

343	3255-40
1-22	Հասցի
Հասցի	
և զի ցուցի	
համար 18/5	
18/5	18/5

վերջին ժամանակները դատական օրդանները համարվել են ժողովրդական դատավորների և ժողովրդական ատենակալների նորերով, վերոնք դեռևս բավարար չափով ծանոթ չեն խորհրդային դրուսթյանն ու չունեն դատական աշխատանքի անհրաժեշտ փորձ: Ընկերներին ոգնութուն և պետք, վորպեսզի նրանք արագ կերպով դրոջանան տիրպետել դործին, ընդդրկեն դատական աշխատանքի հանական հարցերը, կողմնորոշվեն դատարանի առաջ դրված խնդրներու:

«Ժողովրդական դատավորի և ժողովրդական ատենակալի գրադրան»-ի լույսընծայումը զգալի չափով կլրացնի արդարագրատության մարմինների իրավաբանական հանրամատչելի գրականության բացը և եյական ոժանդակութուն ցույց կտա ժողովրդական դատավորին և ժողովրդական ատենակալին՝ նրանց դործնական աշխատանքում:

Գրադարանը բաղկացած է քրեական և քաղաքացիական իրավունքի, դատական իրավունքի առանձին հարցերին և ժողովրդական դատարանի աշխատանքների այլ առանձին հարցերին նվիրված մի շարք գրքերից:

Իրավաբանական հրատարակչութունը խնդրում է ընդգրկել ցույցից լույս ընծայվող գրադարանի վերաբերյալ իրենց կարծիքն ու դիտողութուններն ուղարկել հրատարակչությանը:



3255
40

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սոցիալիստական քրեական իրավունքի հիմնական հարցից մեկը հանդիսանում է հանցանքի բաղկացության բցը: Գատարանի ամեն մի աշխատող մշտապես դործամ է «հանցանքի բաղկացություն» արտահայտությունը, ահայն ամենևին վոչ բոլորն են այն ճիշտ հասկանում: Ինչպես հանցանքի բաղկացության ճիշտ ըմբռնումից և կախված քրեական դործի ճիշտ լուծումը և հենց մեղագրյալի հետագա բախտը: Հանցանքի բաղկացությունից կախման մեջ է գտնվում նաև պատժի չափի կիրառումը: Հանցանքի բաղկացության ճիշտ վորոշումը ապահովում է ԽՍՀՄ Սահմանադրությամբ յերաշխատիրած՝ անձի իրավունքները և որինական շահերը, ապահովում է սոցիալիստական որինականության պահպանումը, դրանով իսկ նպաստում է սոցիալիստական պետության ամրապնդմանը: Այն հարցին, թե մարդու ինչպիսի հասարակական վտանգավոր վարքն է հանցանք հանդիսանում և ինչպիսին չի հանդիսանում, կարելի յե պատասխանել միայն հանցանքի բաղկացության վերլուծության հիման վրա: Հանցանքի բաղկացությունը իր մեջ պարունակում է վորոշակի, որենուամ խստորեն սահմանված հատկանիշներ, և միայն այդ խիտների սուկայության դեպքում արարքը կարող է հանապարդութուն համարվել:

Մենհըրին է խստորեն պահպանել սոցիալիստական որինականությունը քրեական դործերը լուծելու ժամանակ, առանց վերլուծելու հանցանքի բաղկացությունը: Քրեական արգարագրատության կիրառման ժամանակ որենքի ճիշտ պահպանումն է սոցիալիստական պետության ամրապնդումը: Սոցիալիստական հասարակության մեջ որենքներն իական ժողովրդական որենքներ են, սոցիալիստական պե-

տուեթյունը՝ դա աշխատավորների պետուեթյունն է, վորն արտահայտում է ժողովրդի շահերը, որենքների պահպանումը, սոցիալիստական որինականության խտտազույն պահպանումը դրա հետ միասին հանդիսանում է բազմամիլիոն ամբողջ խորհրդային ժողովրդի շահերի պահպանում:

Ընկ. Կալինինը XVІІІ կուսամասդումարում արտասանած իր ճառում հիանալի խոսքեր ասաց. «Սոցիալիստական պետականության ամբապնդման ամենառեալ միջոցը՝ այդ որենքների պահպանումն է իշխանության որդանների հասարակական կազմակերպությունների և յուրաքանչյուր քաղաքացու կյանքի ու գործունեյության բոլոր վորդաներում» (Մ. Կալինին, Ճառ ՀամԿ(բ)Կ XVІІІ համագումարում, Քաղհրատ, 1939 թ., էջ 8—9, Յերևան):

ԽՍՀՄ, միութենական և ավտոնոմ հանրապետությունների դատարանակազմության որենքը 2-րդ հոդվածում վորպես ԽՍՀՄ արդարադատության հիմնական խնդիրներից մեկը սահմանում է ԽՍՀՄ բոլոր հիմնարկուքյունների, կազմակերպուքյունների, պաշտոնատար անձնավորուքյունների և քաղաքացիների կողմից խորհրդային որենքների հիշտ և անշեղ կատարման ապահովումը:

Կոմունիստական հասարակության համար մղվող պայքարում խորհրդային դատարանի վրա խնդիր է դրվում անողորմաբար պատժել խորհրդային ժողովրդի թշնամիներին: Իայց դրա հետ զուգընթաց խորհրդային դատարանի խնդիրն է հանցագործներին ուղղելը և վերադաստիարակելը: Դատարանը, վերլուծելով այս կամ այն հանցանքի բաղկացությունը, պարզում է, թե վորտեղ թշնամական գործունեյություն է, վորտեղ այսպես կոչված ընդհանուր քրեական հանցագործություն: Այդ նա կարող է անել միայն այն ժամանակ, յերբ ճշտորեն պարզի հանցանքի բաղկացությունը և, հետևաբար, ճշտորեն կատարի որենքը:

Բուրժուազիան ել խուսում է «որինականության» մասին, բայց բուրժուական այդ «որինականությունը» վոչ այլ ինչ է, քան կամայականություն և ապորինություն մի յուր շահագործողների կողմից աշխատավորների լայն մաս-

սաների վերաբերմամբ: Այդ մասին պերճախոս կերպով վկայում են Փաշխտական մոլադարների արյունալի գործերը, մոլադարներ, վորոնք արտակարգ դատարանները և առանց դատ մահապատիժները վերածել են աշխատավորության հետ դատաստան տեսնելու սովորական մեթոդների: Փաշխտները վերացրել են բուրժուա-դեմոկրատական ազատությունների ամեն տեսակի մնացորդները: Բացարձակ կամայականություն, իրավաբկուքյուն և բռնություն մողովրդի վերաբերմամբ, ահա քե ինչ է ներկայացնում իրենից «որինականությունը» Փաշխտական յերկրներում:

Բուրժուազիան, խոսելով «որենքի», «որինականության» մասին, կեղծավորաբար հայտարարում է ապադասակարգային, իրր թե համաժողովրդական շահի մասին, վոր արտահայտված է որենքի մեջ: Իսկ իրականում «որենքը» և «որինականությունը» կապիտալիստական յերկրներում պաշտպանում են կապիտալի շահերը, դրամապարկի շահերը: Ժողովրդական իմաստուն առածներում ցայտուն կերպով բացահայտվում է բուրժուական դատարանի և որենքի դասակարգային էյությունը: Յարական նախահեղափոխական «որենքի» մասին ուսուական ժողովրդական առածը ասում էր. «Закон, что дышло, куда повернул, туда и вышло»: «Որենքը» իր ոգտին շուռ եր տալիս, հասկանալի յե, հարուստ Փարբիկանտը, կալվածատերը, վաճառականը. այդ մասին շատ սուր ասված է ուսական ժողովրդական մյուս առածի մեջ. «Ուեղի հետ մի կուվիր, հարուստի հետ մի դատվիր»: Ժողովրդական այդ առածները բացահայտում են բուրժուական որենքի և դատարանի դասակարգային իսկական բնույթը:

Մորհրդային սոցիալիստական քրեական որենքը և քրեական դատարանը իրենց բնույթով, իրենց նպատակներով և խնդիրներով ուղղակի հակադրություն են բուրժուական դատարանին և որենքին: Մեր դատարանն ու մեր որենքը իսկական ժողովրդական են, մինչդեռ բուրժուական դատարանը գտնվում է մի բուռ հարուստ-շահագործողների ծառայության մեջ:

Մեծ և պատվավոր են խորհրդային դատավորների

խնդիրները կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայ-
քարում, այդ խնդիրները հանրագոյթամբ կատարելու հա-
մար մեր ժողովրդական դատավորները պետք է մշտապես
աշխատեն իրենց իրավաբանական վերակալորումը բարձ-
րացնելու վրա: Հանցակազմի հարցի ուսումնասիրությու-
նը որենքի ճիշտ կիրառման և սոցիալիստական որինակա-
նության ամրապնդման կարևորագույն պայմաններից
մեկն է:

ԳԼՈՒԽ I

ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ԸՄԲՈՒՆՈՒՄՆ ԸՍՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ

1. ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սոցիալիստական քրեական իրավունքի գիտության մեջ
տարբերվում են ընդհանուր և հատուկ հանցանքների բաղ-
կացությունները:

Ընդհանուր հանցակազմը սահմանում է այն հատկա-
նիշները, վորոնք պարտադրաբար պետք է իր մեջ պարու-
նակի ամեն մի հանցագործուրքում, ինչպիսի առանձնա-
հատկուրքուններով ել նա տարբերվի: Իսկ հատուկ հան-
ցակազմը սահմանում է այն հատկանիշները, վորոնք հա-
տուկ են միայն կոնկրետ հանցագործուրքում, որինակ՝ գո-
ղուրքումը, սպանուրքումը, վիրավորանքին, խուլիգանու-
րքումը և այլն:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ընդհանուր հանցակազմի առաջին հատկանիշը կայա-
նում է այն բանում, թե ինչին է վրտանձգում հանցագոր-
ծությունը, — հանցագործության որյեկտի մեջ է: Սպանու-
թյան ժամանակ հանցագործության որյեկտը մարդու
կյանքն է, գողության ժամանակ՝ անձնական կամ սոցիա-
լիստական սեփականությունը և այլն: Յերկրորդ հատկա-
նիշը վերաբերում է իրեն այն անձնավորությանը, վորը
կատարել է հանցագործությունը, հանցագործության սու-

րյեկտին: Յերրորդ հատկանիշը բուն գործողությունը կամ
նազործությունն է, վորի միջոցով կատարվում է հանցա-
գործությունը (հանցագործության որյեկտիվ հատկություն-
ները): Գողության ժամանակ խոսքը վերաբերում է գաղտ-
նի հախշտակությանը, խուլիգանության դեպքում՝ հան-
դուզն գործողություններին, վորոնք գուզակցվում են բա-
ցահայտ անհարգանքով դեպի հասարակությունը և այլն:
Վերջապես, հանցակազմի չորրորդ հատկանիշն է հանցա-
գործի հանցանքը (հանցագործության սուբյեկտիվ հատկու-
թյունները): Հանցագործությունը կարող է կատարվել դի-
տավորյալ (որինակ՝ գողությունը) կամ անզուշարբար
(որինակ՝ անզուշ սպանությունը):

Այսպիսով ընդհանուր հանցակազմը պետք է իր մեջ
պարունակի չորս հիմնական հատկանիշներ. հանցագործու-
թյան որյեկտը, հանցագործության սուբյեկտը, հանցա-
գործության որյեկտիվ հատկանիշները և սուբյեկտիվ հատ-
կանիշները:

Հանցակազմի առկայուրյան համար անհրաժեշտ է նրա
բոլոր քվարկած հատկանիշների առկայուրյունը. անգամ
յեթե նրանցից մեկն ու մեկը բացակա յե հանցակազմ չի լի-
նի:

Մանրամասն քննեք այդ հատկանիշներից յուրաքան-
չյուրը:

3. ՀԱՆՅԱԿՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՅՆԵՍԸ

ԽՄՀՄ մեջ ամեն մի հանցագործության որյեկտը հան-
դիսանում են սոցիալիստական հասարակական հարաբերու-
րյունները:

Այսպես, հակահեղափոխական հանցագործությունը
հանդիսանում է վրտանձգություն բանվոր դասակարգի դիկ-
տատուրայի դեմ. պետական կամ հասարակական հիմնարկ-
ներին կամ ձեռնարկություններին պատկանող գուշքի հա-
փըշտակությունը հանդիսանում է վրտանձգություն սոցիա-
լիստական սեփականության՝ խորհրդային հասարակար-
գի հիմքի դեմ. խուլիգանությունը հանդիսանում է վրտան-
ձգություն սոցիալիստական իրավակարգի դեմ և այլն:

Հարկավոր ե տարբերել հանցագործութեան որչեկտը և հանցագործութեան առարկան: Յենթադրենք, թե քրեական գործ ե հարուցվում յերեք պարկ ալյուր գողանալու համար: Գողութեան առարկան այստեղ, ակներևութեն, հանդիսանում ե ալյուրը: Դրանով, սակայն, դեռևս չի մտնում հանցագործութեան որչեկտի հարցը: Յեթե այդ ալյուրը պատկանում եր կոլտնտեսութեանը կամ խորհրդային սովետականությանը, ապա մենք ընդունում ենք, վոր գողութեան որչեկտը հանդիսանում ե սոցիալիստական սեփականութեանը, իսկ յեթե այդ ալյուրը լիներ կոլտնտեսական անձնական սեփականութեան, ապա գողութեան որչեկտը կհանդիսանար քաղաքացու սեփականութեանը: Այս որոշումներէց յերևում ե, վոր հարկավոր ե տարբերել հանցագործութեան որչեկտը և հանցագործութեան առարկան: Հանցագործութեան առարկա կլինեն այն կոնկրետ իրերը, վորոնց դեմ ուղղված եր հանցագործութեանը:

Հանցագործութեան որչեկտի սահմանումը բացառիկ խոշոր նշանակութեան ունի հանցավոր արարքը վորակելու ժամանակ: Այսպես, որինակ, գույքի վոչնչացումը և վնասումը, յեթե այն վերաբերում ե պետական կամ հասարակական գույքին, վորակվում ե մի հոգվածով (ՌՍՖՍՀ Գր. Որ. 79-րդ հոդ.), իսկ յեթե այն վերաբերում ե քաղաքացու անձնական գույքին՝ մի այլ հոգվածով (ՌՍՖՍՀ Գր. Որ. 175-րդ հոդ.):

Հանցագործութեան որչեկտի առանձնահատուկ հատկութեանները հաճախ հանդիսանում են այնպիսի հանգամանքներ, վորոնք ծանրացնում են հանցանքը (որինակ՝ անձնավորութեան սպանութեանը, վորը գտնվում ե անողանական վիճակում, դիտվում ե վորպես սպանութեան ավելի ծանր տեսակ):

Շատ կարևոր ե այս կամ այն հանցավոր վրտնձգութեան որչեկտը սահմանելու ժամանակ ուսումնասիրել այն բոլոր առանձնահատուկութեանների մեջ, վորոնք հատուկ են տվյալ հանցակազմին: Այսպես, ստալին հայացքից տեռորիստական ակտի և հասարակ սպանութեան ժամանակ հանցագործութեան որչեկտը կարծես թե հենց միևնույնն ե՝ մարդու կյանքը: Բայց մենք այստեղ յերկու խորասպես

տարբեր կազմ ունենք, քանի վոր տեռորիստական ակտի որչեկտը վոչ միայն պարզապես մարդու կյանքն ե, այլ խորհրդային իշխանութեան կամ հեղափոխական բանվորների ու զյուղացիների կողմակերպութեան ներկայացուցչի կյանքը:

Հանցակազմի բոլոր տարբեր սերտ կապակցութեան մեջ են: Ուստի վրտնձգութեան որչեկտի ճիշտ վորոշումն ողնում ե հանցակազմի մյուս բոլոր տարբերի, այսինքն՝ սուբյեկտի, հանցակազմի որչեկտի և սուբյեկտի և հատկութեանների վերլուծմանը: Այսպես, որինակ, տեռորիստական ակտի և հասարակ սպանութեան հանցակազմի որչեկտի ճիշտ սահմանադատման հայտարարմանը կողմի հանցակազմի սուբյեկտի, այսինքն՝ այն նպատակները, շարժառիթները, դիտավորութեանների վերլուծութեանը, վրտնձգով ղեկավարվել ե հանցագործը: Ամեն մի հանցագործութեան մեջ մենք տեսնում ենք և՛ վրտնձգութեան անմիջական առարկան և՛ հանցագործութեան որչեկտը:

4. ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԸ

Հանցակազմի հետևյալ հատկանիշը հանցավոր արարքի սուբյեկտն ե: Հանցագործութեան սուբյեկտն այն անձնավորությունն ե, վորը կատարել ե հանցագործությունը:

Հանցագործութեան սուբյեկտ կարող ե լինել մեղսագիտակ ֆիզիկական անձնավորությունը: Ըստ 1935 թ. սպրիլի 7-ի որենքի, հանցագործութեանների միջանի կատեգորիաներով (գողութեան, սպանութեան, բռնութեան պատճառները, մարմնական վնասվածքներ, խեղութեան, սպանութեան փորձ) հանցագործութեան սուբյեկտը կարող ե լինել նաև անչափահասը 12 տարեկան հասակից, մնացած բոլոր հանցագործութեաններում հանցագործութեան սուբյեկտ կարող ե լինել միայն 16 տարեկան հասակի հասածը: Հանցագործութեան սուբյեկտ կարող ե լինել միայն մեղսագիտակ անձնավորությունը: Լինել մեղսագիտակ, նշանակում ե ընդունակ լինել գիտակցելու կատարելիքը, ճիշտ վերաբերվել ջրմապատող առարկաներին և յերևույթներին, ընդունակ լինել հասկանալ որենքի պահանջները:

Միայն այն մարդիկ, վորոնք ունեն այդ ընդունակությունները, կարող են հանցավոր արարքի սուբյեկտներ լինել և իրենց կատարած հանցագործությունների համար՝ պատասխանատու:

Հանցագործության սուբյեկտներ չեն կարող լինել այն փոքրահասակները, վորոնք չեն հասել 12 տարեկանի, վերևում թվարկած գործերի կատեգորիաներով, և 16 տարեկանի՝ բոլոր մնացածների դժով, վորովհետև նրանք գեղեկապես չգործացած Ֆիզիկական և հոգեկան ընդունակությունների հետևանքով չեն կարող իրենց հաշիվ տալ իրենց գործողություններում և ղեկավարել այդ գործողությունները, լիովին հասկանալ և ղեկավարվել որենքի պահանջներով:

Այդ հասակը, վորին հասնելով Ֆիզիկական անձնավորությունը կարող է հանցագործության սուբյեկտ լինել, սահմանվում է քրեական որենսդրությամբ:

Հոգեկան հիմանդ մարդիկ չեն կարող հանցագործության սուբյեկտ լինել, վորովհետև նրանք չունեն վերևում մատնանշված ընդունակությունները և նրանց կողմից կատարված գործողություններն անհնար է վերագրել նրանց վորպես հանցանք:

ՌեՖՍՀ Գրեական Որենսգրքի 11-րդ հոդվածի մեջ և միութենական մյուս հանրապետությունների քրեական որենսդրքերի համապատասխան հոդվածներում ճշտորեն մատնանշվում են անմեղսագիտակցության դեպքերը. պատիժ չի կարելի կիրառել այն անձնավորությունների վերաբերմամբ, վորոնք հանցագործությունը կատարել են խրոնիկական հոգեկան հիվանդության, կամ հոգեկան գործունեությունից ժամանակավոր խանգարման վիճակում, կամ այլ հիվանդազին վիճակում, յեթե այդ անձնավորությունները չեն կարող իրենց հաշիվ տալ իրենց գործողություններում կամ ղեկավարել այն, ինչպես նաև այն անձնավորությունների վերաբերմամբ, վորոնք թեև գործել են հոգեկան հալասարակչոված վիճակում, բայց դատավճիռ կայացնելու մոմենտում հիվանդացել են հոգեկան հիվանդությամբ:

Անմեղսագիտակցությունը վորոշվում է յերկու պայ-

մաններով կամ, ինչպես ասում են, կրիտերիաներով՝ բժշկական և իրավաբանական:

Անմեղսագիտակցության բժշկական կրիտերիան կայանում է խրոնիկական հոգեկան հիվանդության, կամ հոգեկան գործունեությունից ժամանակավոր խանգարման, կամ հիվանդազին այլ վիճակի առկայությունից մեջ: Հոգեկան հիվանդության, կամ հոգեկան գործունեությունից ժամանակավոր խանգարման, կամ հիվանդազին այլ վիճակի առկայությունը հաստատվում է դատական-բժշկական եֆսպերտիզայի միջոցով, վորը յեզրակացություն է տալիս տվյալ մարդու հոգեկան հատկությունների և կատարածը գիտակցելու նրա ընդունակությունների մասին:

Անմեղսագիտակցության իրավաբանական կրիտերիան կայանում է մարդու՝ իր գործողությունների մեջ իրեն հաշիվ տալու կամ դրանք ղեկավարելու, քրեական որենսդր հասկանալու և որենքի պահանջներով ղեկավարվելու անկարողությունից մեջ: Անմեղսագիտակցության իրավաբանական կրիտերիայի հաստատման մեջ վճռական խոսքը պատկանում է դատարանին, վորը դատարբժշկական եքսպերտի յեզրակացության հիման վրա վճռում է անմեղսագիտակցության հարցը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում:

Պրակտիկայում դեպքեր են լինում, յերբ դատարանը բոլորովին հեռու յե քաշվում այն հարցի վորոշումից, թե մարդ մեղսագիտակ է կամ մեղսագիտակ չէ, ամբողջովին հենվելով դատարբժշկական եքսպերտի յեզրակացության վրա: Այդպիսի մոտեցումն այդ կարևոր հարցին բոլորովին էլ ճիշտ չէ, ինչպես որենքի տեսակետից, այնպես էլ դատարանի պարտավորությունների տեսակետից. անմեղսագիտակցության վերջնական վորոշումը պատկանում է միայն դատարանին, վորը կարող է և պետք է այն դեպքերում, յերբ կան կասկածներ մեղադրյալի՝ իր կատարածն ըմբռնելու ընդունակության վերաբերյալ, նշանակի նոր եքսպերտիզա:

Այն դեպքերում, յերբ դատարանը մեղադրյալի մեղսագիտակցության մասին յեզրակացության հանդի, նա կայացնում է համապատասխան մեղադրական դատավճիռ:

Ըստ մեր Քրեական օրենսգրքի (ՌՆՖՍՀ Քր. Որ. 2, 3 և 4. և միութենական մյուս հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները) հանցագործությունից սուբյեկտը կարող է լինել ինչպես ՌՄՃՄ քաղաքացին, այնպես էլ ոտարերկրացին (բացի դեմանազխատական ներկայացուցիչներից): Մի շարք հանցագործություններում հանցագործությունից սուբյեկտ կարող են լինել վտորչակի անձնավորություններ կամ, ինչպես նրանց անվանում են, հանցագործության հատուկ սուբյեկտներ: Հանցագործության այդպիսի հատուկ սուբյեկտները թվին վերաբերում են, որինակ, պաշտոնատար անձնավորությունները պաշտոնեյական հանցագործությունների դժով (ՌՆՖՍՀ Քր. Որ. 109, 121 և 4. և միութենական մյուս հանրապետությունների քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները), ղինտրականները՝ ռադմական հանցագործությունների դժով (ՌՆՖՍՀ Քր. Որ. Որ. 193), բժիշկները (157 և 2-րդ մաս) և այլն:

5. ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՐՅԵԿՏԻՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ամեն մի հանցագործություն կատարվում է վորեն գործողությունից միջոցով կամ թե չէ համապատասխան միջոցներ չձեռնարկելու միջոցով, անգործունեյության միջոցով: Գործողությունից միջոցով կատարվող հանցագործության օրինակ կարող է ծառայել գողությունը (ուրիշի գույքի զաղտնի հափշտակումը), կողոպուտը (գույքի բացահայտ հափշտակումը), սպանությունը և այլն: Անգործունեյությունից միջոցով կատարվող հանցագործության օրինակ կարող է ծառայել իշխանությունից անգործունեյությունը, պաշտոնատար անձի անիտությունը, վտանգի մեջ թողնելը և այլն: Հանցակազմի օրյեկտիվ կողմն իր մեջ պարունակում է նաև գործողությունից կամ անգործունեյությունից (հանցավոր վարքը) և վրա հասած հանցավոր հետևանքի միջև յեղած պատճառական կապը: Արարքի և հետևանքի միջև յեղած պատճառական կապի առկայությունից հաստատումն անհրաժեշտ է այս կամ այն հանցակազմի վորոշման համար: Բավական է մի օրինակ այդպիսի ան-

հրաժեշտությունը ցույց տալու համար: Տուժող Պետրովին Ալեքսանդրովը հասցնում է կյանքի համար անվտանգ մարմնական վնասվածքներ: Հիվանդանոցում Պետրովի վերքը կեղտավում է, և դրա հետևանքով նա վորոշ ժամանակից հետո մահանում է արյան վարակումից: Հարց է առաջանում, հարկավոր է արդյոք Ալեքսանդրովի գործողությունը վորակել վորպես մարմնական վնասվածքների հասցնում թե վորպես սպանություն: Պատճառական կապի պարզարանման ժամանակ մենք տեսնում ենք, վոր տվյալ դեպքում մահը վրա յե հասել այնպիսի պատճառներից, վորոնք անմիջականորեն կախված չեն Ալեքսանդրովից (կեղտոտում), վորը չէր կարող նախատեսել, թե իր հասցրած մարմնական թեթև վնասվածքը տուժողի մահը կառաջացի: Բերած օրինակում Ալեքսանդրովի գործողությունների և վրա հասած վերջնական հետևանքի միջև բացակայում է պատճառական կապը, ուստի Ալեքսանդրովի գործողությունը հարկավոր է վորակել վորպես մարմնական վնասվածք:

Հանցակազմի օրյեկտիվ կողմը սահմանում է հենց ինքը՝ գործողությունը (անգործունեյությունը) իր կոնկրետ արտահայտումով, օրինակ՝ փաստաթղթի կեղծում, հափշտակում, սպանություն և նրա իրագործման յեղանակը: Բուն գործողությունից վորպես հանցակազմի հատկանիշի՝ ճիշտ վերլուծությունը և ճիշտ ըմբռնումը կարևոր պայման է քրեական օրենքը ճիշտ կիրառելու գործում:

Հանցակազմի օրյեկտիվ հատկությունների ուսումնասիրությունից ժամանակ յերբեմն բուն գործողությունից յեղանակը վորոշում է գործի վորակումը:

Այսպես, օրինակ, գողությունից ժամանակ անհրաժեշտ պայմանն է գույքի զաղտնի հափշտակման յեղանակը. յեթե հափշտակումը կատարվել է բացահայտորեն, ապա առկա կլինի արդեն վոչ թե գողություն, այլ կողոպուտ. յարգախությունից ժամանակ մեղադրյալի գործողություններում պետք է յտարեյություն լինի և այլն: Մի շարք դեպքերում հանցագործությունից կատարման յեղանակը հանդիսանում է հանցանքը ծանրացնող հանգամանք. այդպիսին

ե, որինակ, սպանութիւնն կատարելն այնպիսի յեղանակով, վորը վտանգավոր է բազմաթիւ մարդկանց կյանքերի համար կամ հատկապէս տանջալից ե սպանողի համար ե ուր.:

Մի շարք հանցագործութիւններում առանձնակի նշանակութիւնն է ձեռք բերում հանցավոր գործողութիւնների վրա հասնող հետեւանքի պարզարանումը. որինակ, ՌՍՖՍՀ Քրեական Որենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մաս. դիտավորյալ հասցրած մարմնական ծանր վնասվածքների հետեւանքով տեղի ունեցած մահն ավելացնում է պատժի չափը: Նման տեսակի բոլոր հանգամանքները պետք է հաստատվեն և հաշվի առնվեն այս կամ այն հանցագործութեան որչեկտիվ հատկութիւններն ուսումնասիրելու ժամանակ:

Հանցակազմի որչեկտիվ կողմին վերաբերում է նաև հանցագործութեան կատարման կոնկրետ իրադրութիւնը, վորի հաշվառումն ու վերլուծութիւնը անհրաժեշտ են հանցագործութեան որչեկտիվ հատկութիւններին քննարկման ժամանակ: Այսպէս, որինակ, հակահեղափոխական պրոպագանդան կամ ագիտացիան այն վայրերում, վորոնք հայտարարված են ռազմական դրութեան մեջ, կամ մասսայական հուզումների ժամանակ ամենից վտանգավորն են և յենթակա յեն ավելի խստագոյն պատժի (ՌՍՖՍՀ Քրեական Որենսգրքի 58¹⁰-րդ հոդ. 2-րդ մասը և միութենական մյուս հանրապետութիւնների քրեական որենսգրքերի համապատասխան հոդվածները), վիրավորանքն էլ, վորը հասցված է պաշտոնական պարտականութիւնները կատարելու ժամանակ (ՌՍՖՍՀ Քրեական Որենսգրքի 76-րդ հոդ.), նույնպէս պատժվում է ավելի խստութեամբ և այլն:

6. ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԸ

Հանցակազմի սուբյեկտիվ կողմը արտահայտվում է հանցանքի զանազան ձևերում: Այդ հանցակազմի կարեւորագոյն հատկանիշներից մեկն է: Մեր քրեական որենսգրքի (ՌՍՖՍՀ Քրեական Որենսգրքի 10-րդ հոդվածը և միութենական հանրապետութիւնների Քրեական որենսգրքերի համապատասխան հոդվածները) ասում է, վոր պատժի յենքա-

կա յեն միայն այն անձերը, ովքեր գործել են դիտավորյալ կերպով կամ անզգուշաբար: Գիտավորութիւնը և անզգուշութիւնը հանցավորութեան արտահայտման տարբեր ձևեր են:

Բաւական չի պարզել այս կամ այն գործողութեան առկայութիւնը, գործողութիւններ, վորոնք արտաքին կողմով նման են վորեւէ հանցագործութեան. անհրաժեշտ է դարձյալ հաստատել սույալ անձնավորութեան կողմից գիտակցական վերաբերմունքը դեպի այդ գործողութիւնները, վորպէսզի գործողութիւնը վորպէս սպանութիւն վորակվի, բաւական չի հաստատել, վոր Ալեքսանդրովը վորոտրդական հրացանի կրակոցով մահ պատճառեց Վասիլյեվին: Անհրաժեշտ է հաստատել, թէ Ալեքսանդրովը արդէ՞ դիտավորյալ կերպով է գործել, թէ անզգուշաբար: Յետեւ հաստատվի, վոր նա գործել է հանցավոր կերպով, ապա ուրիշ հատկանիշների սուկայութեան դեպքում Ալեքսանդրովի գործողութիւններում կա հանցակազմ: Հակառակ դեպքում՝ հանցանքի բացակայութեան, այսինքն՝ դիտավորութեան և անզգուշութեան բացակայութեան դեպքում, չի լինի նաև հանցակազմ, թէև արտաքին կողմից մեղադրյալի գործողութիւնը նման է հանցագործութեան:

Այսպիսով հանցակազմի սուբյեկտիվ կողմի մեջ մտնում է դիտավորյալ կամ անզգուշութեան ձևով կատարված հանցանքը:

Գիտավորութիւնը կոչվում է հանցագործի դեպի իր գործողութիւններն ունեցած այնպիսի վերաբերմունքը, վորի ժամանակ նա նախատեսում է իր գործողութիւնների հանցավոր հետեւանքները և ցանկանում է կամ գիտակցաբար թույլ է տալիս դրանց վրա հասնելը: Գիտավորութիւնն ունի յերկու ձև. 1) ուղղակի դիտավորութիւն և 2) անուղղակի դիտավորութիւն:

Գործելով ուղղակի դիտավորութեամբ, հանցագործը նախատեսում է իր գործողութիւնների հանցավոր հետեւանքները և ցանկանում է դրանց վրա հասնելը:

Որինակ՝ Ստեպանովը վրիժառութեան նպատակներով վորոշեց սպանել Իվանովին: Նա Իվանովի վրա կրակում է

ատրճանակից, նախատեսելով, վոր կրակոցից վրա կհասնի մահ, և ցանկանում է իր դործողութեան հենց այդ հետևվանքի վրա հասնելը:

Անուղղակի դիտավորութիւն կոչվում է այն դիտավորութիւնը, վորի ժամանակ հանցագործը նախատեսում է իր դործողութիւններէ հանցավոր հետեանքը, ուղղակի չի ցանկանում այդ հետեանքի վրա հասնելը, բայց այնուամենայնիւ գիտակցաբար այն թույլ է տալիս: Որինակ՝ կոյնտեսութեան գոմի հրկիզումը կատարողը գիտե, վոր գոմում, բացի ձիերից, գտնվում է ձիապանը, և այնուամենայնիւ իրականացնում է իր մտադրութիւնը, վորի հետեանքով մեռնում է մարդը. ուղղակի չցանկանալով ձիապանի մահը, հանցագործը, սակայն, գիտակցաբար այն թույլ է տալիս: Հետեաբար, ձիապանի վերաբերմամբ հանցագործն անուղղակիորեն սպանութեան դիտավորութիւն ունի: Ուղղակիորեն նա չէր ցանկանում այդպիսի հետեանքը, բայց մտադրված նպատակին հասնելու համար նա կանգ չէր առնում ձիապանի վոչնչացման առաջ: Մի ուրիշ որինակ: Հանցագործը մոտիկ տարածութեան վրա կրակում է իր դռնի վրա, նախատեսելով, վոր կարող է սպանել նաև կողքին կանգնած մարդուն, վորին ամենեկն էլ մտադիր չէր սպանել. ի վերջո սպանված են դուրս դալիս յերկուսը: Տվյալ դեպքում կա և ուղղակի և անուղղակի դիտավորութիւն. մատնանշված գոհի վերաբերմամբ հանցագործն ունի ուղղակի դիտավորութիւն, մյուս մարդու վերաբերմամբ՝ անուղղակի:

Ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորութիւնը հալասարապես վտանգավոր են, ուստի որենքը տարբերութիւն չի դնում հանցագործութեան համար պատժի չափի մեջ, վոր կատարվել է թե՛ մեկ և թե՛ մյուս դիտավորութեամբ: Լինում են դեպքեր, յերբ անուղղակի դիտավորութիւնը վկայում է հանցանքի խոշոր աստիճանի մասին, քան ուղղակին: Պատկերացնենք մեզ, վոր գոմի հրկիզման դեպքում հանցագործի համար պարզ էր, վոր հրդեհը կարող էր վոչնչացնել ավանը, վոր կրակի մեջ կարող են կործանվել մարդիկ. չնայած այդ ամենին, նա հրկիզումը կատարում է: Յեւ իսկպես հրդեհի միջո-

ցով վոչնչացվեց ավանը, կրակի մեջ այրվեցին մի քանի մարդ: Մի՞թե այդպիսի կարգի անուղղակի դիտավորութիւնն իրենից չի ներկայացնում ծանր հանցանքի ավելի բարձր աստիճանը:

Անցնենք հանցավորութեան յերեան գալու յերկրորդ ձևվին՝ անզուլութիւնը: Անզուլութիւնը լինում է, ինչպես և դիտավորութիւնը, յերկու տեսակի՝ հանցավոր անվորութիւն, յերկրորդ՝ հանցավոր ինքնավստահութիւն:

Անզուլութիւնն ի տարբերութիւն դիտավորութիւնից, իրենից ներկայացնում է հանցագործութեան, հանցանքի այնպիսի ձև, վորի մեջ հանցավորութիւնը, հետեւաբար և հասարակական վտանգավորութիւնն արտահայտվում է ավելի սրակաս չափով, քան դիտավորութեան մեջ: Ռեյնոլդսը Գրեական Որենագրքի, ինչպես նաև միութենական մյուս հանրապետութիւնների քրեական որենագրքերի Հատուկ մասում առաջ են քաշվում մի ամբողջ շարք անզուլ հանցակազմեր՝ համեմատաբար մեղմ պատժելիութեամբ:

Անզուլութիւնը կարելի չէ բնորոշել վորպես հանցագործի դեպի հանցավոր հետևանքն ունեցած այնպիսի վերաբերմունք, վորի ժամանակ նա նախատեսել էր հանցավոր հետևանքի վրա հասնելը, բայց քեթևամտաբար հույս ուներ այն կանխել (հանցավոր ինքնավստահութիւն), կամ չէր նախատեսել հանցավոր հետևանքի վրա հասնելը, բայց պետք է այն նախատեսեր (հանցավոր անվորութիւն):

Հանցավոր ինքնավստահութեան որինակ: Ետեքը, ցանկանալով փայլել մեքենան կատարելու արվեստով, վորոչեց մոտեցող գնացքի առջևից արագ անցնել յերկաթուղային գիծը չպահպանվող սայլանցով, բայց հայտնի չառավ ժամանակը, — է ի վերջո տեղի ունեցավ ^{հրդեհ} արհեստ: Ետեքը տվյալ որինակում նախատեսել էր ավարիան, բայց թեթեւաբար հույս ուներ այն կանխել: Հանցավոր անվորութեան որինակ: Մարդը, չստուգելով, թե հրացանը լիցուն է, կատակով նշան է բռնում հարեանի վրա, իջնցնում է ձգանը և տեղի չի ունենում կրակոց, վորով տեղնուտեղը սպանում է հարեանին: Նա չէր նախատեսել այդպիսի հե-

3255
40

Սարգս



տեանքը, բայց պետք է այն նախատեսեր: Ուստի նա պետք է քրեական պատասխանատվութիւն կրի անդդուչ սպանութեան համար: Քննելով անուղղակի դիտավորութիւնը և հանցավոր ինքնախտահութիւնը, մենք տեսնում ենք, վոր թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում հանցավորը գործում է, նախատեսելով հանցավոր հետեանքների վրա հասնելու հնարավորութիւնը. դրանք մենք է նրանց նմանութիւնը: Նրանց միջև յեղած տարբերութիւնն այն է, վոր անուղղակի դիտավորութեան ժամանակ հանցագործը միջոցներ ձեռք չի առնում հանցավոր հետեանքի վրա հասնելու կանխելու համար. նա ինքը վոչինչ չի անում դրա համար և հուշա չունի վորեւէ կողմնակի ուրիշ ուժերի վրա: Ընդհակառակը, հանցավոր ինքնախտահութեան ժամանակ, վորպէս կանոն, հանցավորը միջոցներ է ձեռք առնում հանցավոր հետեանքները կանխելու համար, յենթադրում է, թէ իրեն կհաջողվի իր ճարտարութեան, հմտութեան միջոցով կամ փորձառութեան միջոցով կամ ուրիշ վորեւիցե պատճառով խուսափել հանցավոր հետեանքի վրա հասնելուց:

Դիտավորյալ և անդդուչաբար գործած հանցագործութիւններից հարկ է տարրերել պատահաբար կատարված գործողութիւնները, անկախ այդ կատարած անձնավորութիւնների կամքից և մտադրութիւններից. որինակ՝ մարդ, սայթաքելով, ընկնում է և ընկնելու ժամանակ զետնով է տալիս մի կնոջ յերեխայի հետ, յերկուսին էլ մարմնական ծանր վնասվածքներ պատճառելով: Անցորդի գործողութիւնը այժալ զեպքում պատճէյի չի հանդիսանում, վորովհետեւ նա չէր նախատեսել այդպիսի հետեանք և չէր կարող այն նախատեսել: Այսպիսով պատահական են կոչվում այնպիսի գործողութիւնները, վորոնց ժամանակ գործողութիւնը կատարողը այն չէր նախատեսել և չէր կարող նախատեսել հետեանքները:

Ասվածից յերևում է, թէ ինչպիսի հսկայական նշանակութիւն ունի հանցակազմի մեջ նրա սուբյեկտիվ կողմերի ճիշտ վերլուծութիւնը, հանցագործութիւնը կատարողի հանցանքի հաստատումը:

Շատ հանցագործութիւններ կարող են կատարվել մի-

այն դիտակցաբար. դրանք են, որինակ, դողութիւնը, շունարարութիւնը, շորթումը և այլն: Ուրիշները կարող են կատարվել անդդուչաբար (անդդուչաբար մարմնական վնասվածքներ պատճառելը, անդդուչ սպանութիւնը և այլն): Վերջապէս միջանի հանցագործութիւններ կարող են կատարվել և՛ դիտավորյալ և՛ անդդուչաբար:

7. ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՄՍԾԱՌԸ ՅԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի վերլուծութեան ժամանակ բացառիկ խոշոր նշանակութիւն ունի նաև հանցագործութեան դրդապատճառի և նպատակի ճիշտ սահմանումը: Բնական է մտանանչել, վոր հակահեղափոխական հանցագործութիւնների և վարչակարգի դեմ ուղղված առանձնապէս վտանգավոր հանցագործութիւնների միջև յեղած տարբերութիւնը սովորաբար առաջ կայանում է հանցագործութիւնների նպատակների տարբերութեան մեջ. հակահեղափոխական հանցագործութիւններ կատարելու ժամանակ հետապնդվում են հակահեղափոխական նպատակներ—բանվոր դասակարգի դիկտատուրայի տապալում, քայքայում կամ թուլացում. վարչակարգի դեմ ուղղված առանձնապէս վտանգավոր հանցագործութիւններ կատարելու ժամանակ հակահեղափոխական նպատակները բացակայում են:

Այն դրդապատճառները, վորոնք զրգել են անձնավորութեանը կատարել հանցագործութիւնը, նպատակները, վորպիսիք նա հետապնդում էր, նույնպէս մտնում են հանցակազմի սուբյեկտիվ կողմի մեջ: Առանձին հանցագործութիւնների մեջ դրդապատճառի և նպատակի հաշվառումը վճռական նշանակութիւն է ձեռք բերում. այսպէս, որինակ, սպիկուլացիայի ժամանակ հանցակազմի սուբյեկտիւնը համար անհրաժեշտ է հաստատել շահույթի նպատակները, շահադիտական կեղծիքի ժամանակ՝ շահադիտական նպատակները և այլն: Առանձին դեպքերում դրդապատճառը և նպատակը հանդիսանում են մեղքը ծանրացնող հանգամանք. այսպէս, որինակ, խանդի դրդապատճառներով

կատարված սպանութիւնը հանդիսանում է վորակյալ, և վոչ թե հասարակ տեսակի սպանութիւն:

8. ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍԵՐՆ ՈՒ ՀԱՆՅԱԿԱԶՄԸ

Մենք քննեցինք հանցակազմի բոլոր հիմնական հատկանիշները: Մենք խոսում ելինք հանցակազմի և նրա հատկանիշների մասին բոլոր հանցագործութիւնների համեմատ, անկախ նրանց տեսակներից և առանձին տիպերից: Ուստի ամբողջ ասածը վերաբերում է ընդհանուր հանցակազմին: Հատուկ հանցակազմը քննարկելու ժամանակ, որինակ՝ սպանութիւն, գողութիւն և այլն, հաշվի յեն առնվում արդեն վոչ միայն ընդհանուր հատկանիշները, այլև հատուկ հատկանիշները, վորոնք հատուկ են միայն հանցագործութիւնի սվյալ տիպին: Կոնկրետ հանցագործութիւնը քննարկվում է իր բոլոր առանձնահատկութիւններում և մանրամասնութեամբ: Հատուկ հանցակազմերի ուսումնասիրութեամբ զբաղվում է քրեական իրավունքի Հատուկ մասը:

Որինակ՝ սպանութիւն կազմի վերլուծութիւնի ժամանակ կան հենց նույն չորս հատկանիշները՝ որչեկտ, սուբյեկտ, հանցագործութիւնի որչեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Սակայն այդ բոլոր չորս հատկանիշներով տվյալ հանցագործութիւն կազմը ձեռք է բերում այնքան հատուկ դժեր, վորոնք յուրահատուկ են միայն հենց իրեն, վոր այդ հանցագործութիւն կազմը կտարբերվի Քրեական Որենագրքի Հատուկ մասում նկարագրված մնացած բոլորից:

Քրեական Որենագրքի Ընդհանուր մասում չի պարունակվում առանձին հանցակազմերի նկարագրութիւն, գրափոխարեն պարունակվում են ղեկավարող ընդհանուր դրույթներ, վորոնք անհրաժեշտ են ամեն մի հատուկ հանցակազմ քննարկելու համար: Ընդհանուր մասում տրվում է հանցագործութիւն բնորոշումը, մատնանշվում են պատժի նպատակներն ու խնդիրները, սահմանվում են քրեական պատասխանատվութիւնի պայմանները, մեղավորութիւն

ձևերը, այն հանգամանքները, վորոնք բացառում են քրեական պատասխանատվութիւնը, հանցավոր գործունեյութիւն (հանցակցութիւն) յերեան զարու ձևերը, հանցավոր գործունեյութիւնի զարգացման ստադիաները և այլն: Ընդհանուր մասն իրենից ներկայացնում է ուսումնք հանցագործութիւն և պատժելիութիւնի մասին, վորը սահմանում է ընդհանուր սկզբունքներ, առանց վորոնց չի կարելի ճշտորեն մտտենալ հանցագործութիւնի առանձին տեսակների քննարկմանը:

Քրեական Որենագրքի Ընդհանուր մասի հիման վրա մենք կարող ենք ասել միայն ընդհանուր կազմի մասին, ասել, վոր արարքը հանցավոր ճանաչելու համար անհրաժեշտ է հաստատել հանցակազմի չորս տարրերի առկայութիւնը, վոր հանցագործութիւնի որչեկտ հանդիսանում են սոցիալիստական հարաբերութիւնները, իրավակարգը, վորը հաստատված է սոցիալիստական հասարակութիւնի մեջ (ՌՍՖՍՀ Քր. Որ. 6-րդ հոդ.), վոր հանցագործութիւնի նուրբիկտ հանդիսանում է ամեն մի մեղադրուակ Ֆիզիկական անձնաւորութիւն (ՌՍՖՍՀ Քր. Որ. 10-րդ, 11-րդ հոդ.), վոր հանցակազմի որչեկտիվ կողմ հանդիսանում է հասարակական-լուսնագրք, հակաիրավական գործողութիւնը կամ անգործունեյութիւնը (ՌՍՖՍՀ Քր. Որ. 6-րդ հոդ.), վոր սուբյեկտիվ կողմ հանդիսանում է դրտափոբյալ կամ անգրուչարար կատարած հանցանքը (ՌՍՖՍՀ Քր. Որ. 10-րդ հոդ.):

Որենքով կայուն կերպով սահմանված այդ հատկանիշները, վորոնք կազմում են հանցակազմը, բացառիկ խոշոր նշանակութիւն ունեն: Չլինեն դրանք, հանցավոր արարքը կարելի կլիներ ընդունել վոչ-հանցավորի տեղ, պատժելին՝ վոչ-պատժելի տեղ: Անհնարին կլիներ պահպանել սոցիալիստական խիստ որինականութիւն:

Քրեական Որենագրքի Հատուկ մասը, ի տարբերութիւն Ընդհանուր մասից, պարունակում է կոնկրետ հանցակազմեր և պատժի կոնկրետ միջոցների մատնանշումները: Քրեական որենագրքի Հատուկ մասի հոդվածների հիման վրա մենք կարող ենք ասել ամեն մի հանցագործութիւնի մասին կոնկրետ կերպով:

Բերենք որինակ: ՌՆՖՍՀ Քր. Որ. 46-րդ հոդվածը և միութենական մյուս հանրապետությունների քրեական ու քրեաբանական համապատասխան հոդվածները բոլոր հանցագործությունները ստորաբաժանում են ա) ՈՍՀ Միություն մեջ բանվորների և գյուղացիների իշխանություն կողմից հաստատված խորհրդային կարգի հիմունքները դեմ ուղղված և դրա համար էլ ամենից ավելի վտանգավոր էանաչվող հանցագործությունների, և բ) մնացած բոլոր հանցագործությունների: Առաջին կատեգորիայի հանցագործությունների համար Քրեական Որենսդրությունը սահմանում է այն նվազագույնը, վրեժից ցած չի կարող նշանակվել պատժի չափը, մնացած բոլորի համար սահմանված է միայն առավելագույնը, վոր թուլյատրվում է դատարանի համար:

Վերջինք հակահեղափոխական հանցագործությունը (ՌՆՖՍՀ Քրեական Որենսդրություն 581-րդ հոդ.) և վերլուծենք նրա կազմը: Հակահեղափոխական հանցագործության որչեփև հանդիսանում է բանվոր դասակարգի դիկտատուրան, վորովհետև վտանգությունը խորհրդային իշխանություն և բանվոր-գյուղացիական կառավարություն դեմ վտանգություն է բանվոր դասակարգի դիկտատուրայի դեմ. վտանգությունն արտաքին անվտանգության, անտեսական հիմնական նվաճումների, պրոլետարական հեղափոխության ազգային նվաճումների դեմ նույնպես վտանգություն են բանվոր դասակարգի դիկտատուրայի դեմ:

Հակահեղափոխական հանցագործության սուբյեկտը հանդիսանում է ժողովրդի թշնամին, մեղսագիտակ Ֆիդելիական անձնավորությունը: Այն կարող է լինել ինչպես ոտարերկրացին, այնպես էլ ՈՍՀՄ քաղաքացին:

Որչեփև կողմից հակահեղափոխական հանցագործություններն իրենցից ներկայացնում են ամեն մի գործողություն կամ անգործունեություն, վորն ուղղված է բանվոր դասակարգի դիկտատուրայի տապալմանը, քայքայմանը կամ թուլացմանը: Հանցակազմի առկայություն համար չի պահանջվում իսկական քայքայում, բավական է հաստատել այն դատար, վոր հանցագործն իր գործողություններն իրականացնում էր այդ ուղղությամբ:

Սուբյեկտիվ կողմից պահանջվում է հակահեղափոխական նպատակների առկայություն՝ ուղղակի կամ անուղղակի դիտավորություն: Հակահեղափոխական հանցագործությունը չի կարող անզուլարբար կատարվել:

Այսպես, վերջինելով հանցագործության կոնկրետ աստիճան, մենք նրա կազմի վերլուծություն ժամանակ արդեն սահմանում ենք առանձնահատուկ, միայն նրան հատուկ, կազմի հատկանիշներ:

Վերջինք գոյությունը (ՌՆՖՍՀ Քրեական Որենսդրություն 162-րդ հոդ.): Գոյություն որչեփև հանդիսանում է ուրիշի գույքը. սուբյեկտ՝ ամեն մի մեղսագիտակ Ֆիդելիական անձնավորություն, վոր հասել է որենքով սահմանված հասակին (իսկ 1935 թ. սպրիլի 7-ի որենքով՝ 12 տարեկան). որչեփև կողմից գոյություն հանդիսանում է ուրիշին պատկանած իրի գաղտնի հատիչտակումը, իր, վորը գտնվում է ուրիշի տեխականություն տակ. սուբյեկտիվ կողմից գոյություն՝ միայն դիտավորյալ հանցագործություն է (ուղղակի դիտավորություն):

Այս կազմին ներհատուկ հատկանիշները գոյությունը սարբերում են կողոպուտից, ավազակությունից և մյուս այն հանցագործություններից, վորոնք նախատեսված են Քրեական Որենսդրության հատուկ մասում:

Վերջինք ինքնիրավությունը (ՌՆՖՍՀ Քրեական Որենսդրություն 90-րդ հոդ.): Ինքնիրավության որչեփև հանդիսանում է պետական ապարատի գործունեությունը. սուբյեկտ՝ ամեն մի մեղսագիտակ անձնավորություն, վորը հասել է 16 տարեկանի, որչեփև կողմից ինքնիրավությունը կայանում է այն գործողությունների մեջ, վորոնք ուղղված են գույքը, գույքի իրավունքը կամ վորեիցե իրական կամ յենթադրական իրավունքներ յուրացնելուն և կատարվում են ինքնակամ կերպով, անկախ իշխանություն արգաններից:

Սուբյեկտիվ կողմից պետք է առկա լինի ուղղակի դիտավորություն՝ սուբյեկտը պետք է դիտակցի, վոր նա իր իրավունքն իրականացնում է ինքնակամ կերպով, այսինքն որինական կարգը խախտելով և այնուամենայնիվ ցանկանում է նրա իրականացումը:

Այսպիսով Քրեական Որենագրքի Հատուկ մասի յուրաքանչյուր հոդվածի մեջ պարունակվում է առանձին հանցակազմի նկարագրությունը, վորեւ տեսակի հանցագործությունն առանձին տեսակը, վորը տարբերվում է մյուս հանցակազմերից: Հանցակազմի բոլոր հատկանիշներով յուրաքանչյուր հոդվածի մեջ մենք կարող ենք դասել այն առանձնահատուկը, վորը հատուկ է միայն տվյալ հանցակազմին, բայց դրա հետ միասին նաև այն ընդհանուրը, վոր ներհատուկ է բոլոր հանցագործություններին:

Վերջենք որինակի համար կոնկրետ քրեական մի դործ: Կիրգիզական ԽՍՀ Կոչկոր ռայոնի ժողովրդական դատարանը 1938 թ. փետրվարի 9-ին Կանխետովին, 33 տարեկան, ծառայող, անցյալում չդատված, դատապարտեց Քրեական Որենագրքի 142-րդ հոդ. 2-րդ մասով՝ 7 տարվա ազատազրկման, Կարիմչակովին, 28 տարեկան, ծառայող, անցյալում չդատված, դատապարտեց Քրեական Որենագրքի 142-րդ հոդ. 2-րդ մասով՝ 5 տարվա ազատազրկման, Տաշմուլինին, 25 տարեկան, ծառայող, անցյալում չդատված, և Տոկբայեյին, 26 տարեկան, ծառայող, անցյալում չդատված, յերկուսին էլ՝ Քրեական Որենագրքի 17-րդ և 142-րդ հոդ. 2-րդ մասով դատապարտեց 1½ տարվա ազատազրկման: Կիրգիզական ԽՍՀ Գերադույն դատարանը դատավճիռն ուժի մեջ թողեց:

Դատարանը Կանխետովին և Կարիմչակովին ճանաչեց մեղավոր այն բանում, վոր նրանք հետաքննությունից և դատից թաղնված Յուսուպովի հետ միասին 1937 թ. փետրվարի 16-ին յերեկոյան ժամը 10—11-ին դարեջրատանը Կիդիկովի հետ կռվելու ժամանակ շշուղի վերջինի գլխին հարված են հասցրել, վորից Կիդիկովը քունքի աջ կողմում ջնջխում ստացավ: Ստացված վերքից Կիդիկովը փետրվարի 25-ին մահացավ: Տոկբայեյին և Տաշմուլինին դատարանը մեղավոր ճանաչեց այն բանում, վոր նրանք, սուբուդմրոցի ժամանակ դարեջրատանը դանակելով, շէն բաժանել կովոդներին և դրանով նրաստել են Կիդիկովին ծանր վնասվածքներ հասցնելուն:

Գործն սուղելու ժամանակ պարզվեց, վոր դատարանը

պարտավճաները 1937 թ. փետրվարի 16-ին նստել են դարեջրատանը և դարեջրեր են խմել: Գարեջրատուն է ներս մտել Կիդիկովը ընկերների հետ և, նստելով սեղանի շուրջը, սկսել է Կարիմչակովի հետ կռվելու առիթ վորոնել և վորձել է խիել նրան: Կանխետովն ու Կարիմչակովը ծեծել են Կիդիկովին և դունից դուրս շարտել: Կիդիկովը կրկին վերադարձել է դարեջրատուն և սկսել է վերավորանքներ հասցնել Կանխետովին և Կարիմչակովին: Այն ժամանակ Կանխետովն ու Կարիմչակովը, վորոնց միացել է դարեջրատան խոհարար Յուսուպովը, սկսել են Կիդիկովի հետ սուբուդմրոց, ըստփորում սուբուդմրոցի ժամանակ Կիդիկովի գլխին շշուղի հարված է տրվել: Ստացված հարվածից Կիդիկովը փետրվարի 25-ին մահացել է: Կիդիկովի դիակի դատաբժշկական դիախոսման ակտից յերևում է, վոր բացի աջ գագաթնակրի բնագավառում յեղած ճեղքվածքից, մարմնի վրա ուրիշ վոշ մի վնասվածք չի հայտարարված: Ակտն արձանագրում է, վոր Կիդիկովի մահը տեղի յե ունեցել ուղեղի մեջ գոյացած արյունալեցումից և ուղեղի աջ քունքի բլթակի ջնջխումից: Այսպիսով Կիդիկովի մահվան անմիջական պատճառը յեղավ այն հարվածը, վոր շշուղի տրվեց նրա գլխին: Հաստատված է, վոր գլխին շշուղի հարվածել է դատավարությունից խուսափող Յուսուպովը:

Նախ կանգ առնենք Կանխետովի և Կարիմչակովի գործողությունների վրա: Նրանց հանցավոր գործունեյությունն որչեկար հանդիսացավ Կիդիկովի ստողությունը (քանի վոր նրանք մասնակցել են սուբուդմրոցին և հարվածներ են տվել): Հանցագործությունն սուբյեկտներ մյուսներին թվում յեղել են նաև Կանխետովը, Կարիմչակովը: Հանցագործության որչեկտիվ կողմն արտահայտից Կիդիկովին հարվածներ հասցնելու և մերկ ձեռքերով ծեծելու մեջ, ըստփորում պատճառական կապը՝ հանցագործների գործողությունների և վրա հասած արդյունքի միջև՝ բացակայում է: Հանցագործության սուբյեկտիվ կողմն արտահայտից հարվածներ և ծեծ տալու ուղղակի դիտավորությունն առկայության մեջ:

Հանցակազմի իրավարանական վերլուծությունից հե-

տեւում է, վոր քանի վոր բացի Յուսուպովի կողմից գլխին շշով հասցրած հարվածների վնասվածքից Կիդիկովի մարմնի վրա ուրիշ մոչ մի վնասվածք չի հայտարարված, ապա Կանիետովի և Կարիմչակովի գործողութունները հարկավոր է վորակել մոչ թե 142-րդ հոդ. 2-րդ մասով (դիտաւորյալ մարմնական ծանր վնասվածքներ, վորոնց հաջորդել է մահը), այլ Քրեական Որենագրքի 146-րդ հոդվածով, վորպէս դիտաւորյալ հարվածներ և ծեծ հասցնել: 142-րդ հոդ. 2-րդ մասի կազմն առկա յե միայն դատարանից թաղնված Յուսուպովի գործողութունների մեջ:

Ինչ վերաբերում է դատապարտված Տաշմուլինին և Տոկրայեվին, ապա նրանց գործողութուններում ընդհանրապէս հանցակազմ չկա: Նրանք տուրուզմբոցին մոչ մի մասնակցութուն չեն ունեցել. նրանց հանցագործության հանցակիցներ համարել միայն նրա համար, վոր նրանք տուրուզմբոց անողներին չեն բաժանել, կարելի կլինէր միայն այն դեպքում, յեթե նրանց վրա Կիդիկովի համար որենքով հատուկ հոդադրութուն դրված լինէր, վորպէսին ներկա դեպքում չկա, վորովհետեւ Կիդիկովը նրանց համար կողմնակի մարդ էր և նրանք ամենեւին ել պարտավոր չէին պահպանել նրան:

ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահի բողոքի համաձայն ԽՍՀՄ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան դատավճիռը՝ Տաշմուլինի և Տոկրայեվի վերաբերմամբ վերացրեց և ըստ Քր. Դատ. Որ. 4-րդ հոդ. 5-րդ կետի, նրանց վերաբերյալ գործը կարճեց: Կանիետովի և Կարիմչակովի գործողութունները վերավորակաւորվեցին Քրեական Որենագրքի 146-րդ հոդ., և յերկուսի պատիժն ել պահասեցվեց մինչև 6 ամիս ուղղիչ աշխատանքների:

Հանցակազմի մոչ-ճիշտ վերլուծության մյուս որինաւոր տալիս է ԲԽՍՀ Պուլտովիչեսկի ռայոնի ժողդատարանի գործը: Ժողդատարանը մյուսների թիւում դատապարտեց Աժոյչիկին, 27 տարեկան, բանվոր, անցյալում չղատված, ԲԽՍՀ Քրեական Որենագրքի 214-րդ հոդվածով (դիտաւորյալ սպանություն) 10 տարվա ազատազրկման: ԲԽՍՀ Գե-

րագույն դատարանը դատավճիռը թողել է ուժի մեջ: Այդ գործի հանդամանքները սրանք են: Բլոնի գյուղխորհրդի Կամեննի բրոդ ավանում յերիտասարդական յերեկուցի ժամանակ սպանվեց բանվոր Տրախոմչուկը. հաստատված է, վոր Տրախոմչուկի և յերեկուցիում քեֆ անոց մյուս նույն այս գործով դատապարտված Շկլյարիկի միջև վեճ է տեղի ունեցել, վորը վերածվել է տուրուզմբոցի, կոլոդներին դուրս են շարտել վորոց. Տրախոմչուկի՝ Շկլյարիկի հետ կռիւլու ժամանակ վերջինի քեռու տղան՝ Աժոյչիկը Տրախոմչուկի վրա քար է նետել, վորը կպել է նրա քունքին և տեղնուտեղը սպանել: Գործի հանդամանքները հաստատված են բախկանին լրիվ վկաների ցուցմունքներով և նախնական քննության ժամանակ իր՝ Աժոյչիկի կատարած խոստովանությամբ:

Վերլուծենք հանցակազմը: Հանցագործության որչեկա հանդիսացել է տուժած Տրախոմչուկի առողջությունը (վորովհետեւ վորոչ տարածության վրա մարդուն քար նետելը, ընդհանուր կանոնով, վտանգություն է հանդիսանում նրա առողջության դեմ): Հանցագործության սուբյեկտ մյուսների թիւում յեղել է նաև Աժոյչիկը: Որչեկտիվ կողմնարտահայտվել է նետած քարով, վորը կպել է քունքին, տուժած Տրախոմչուկին մարմնական ծանր վնասվածքներ պատճառելու մեջ, վորին հետևել է մահը: Սուբյեկտիվ կողմնարտահայտվեց մարմնական ծանր վնասվածք պատճառելու ուղղակի դիտաւորության մեջ:

Հանցակազմի վերլուծությունը բերում է մեկ յեղրակացության՝ Աժոյչիկի հանցագործությունը պետք է վորակել ԲԽՍՀ Քրեական Որենագրքի 219-րդ հոդվածի «բ» կետով (դիտաւորյալ մարմնական ծանր վնասվածք, վորին հետևել է մահը):

Ներկա դեպքում դատարանը հանցակազմը անբախարար մանրամասն վերլուծելու հետեանքով յեկել է մոչ-ճիշտ յեղրակացության, հետեարար և մոչ-ճիշտ վորակման: Նատարանը Աժոյչիկին դատապարտել է դիտաւորյալ սպանության համար, թեև Տրախոմչուկին սպանելու դիտաւորությունը գործով մոչնչով հիմնաւորված և սպացուցված

չէ: Այն փաստը, վոր Աժոյջիկը Տրախոմէոսի վրա քար ե շարտել, առանց ուրիշ հանցանշաններ ղեռնս բախարար հիմք չի կարող ծառայել, վորպէսզի Աժոյջիկը ճանաչվի վորպէս ուղղակի կամ անուղղակի գիտաւորութեամբ սպանութեան կատարող, կամ անղղուշ սպանութեան կատարող, վորովհետեւ այս վերջին դեպքում հարկաւոր էր հաստատել, վոր նա պետք է նախատեսեր Տրախոմէոսի մահւան վրա հանելը: Այստեղ վճռական հանգիստանում է այն գործողութեաններ ընույթը, վորոնք մահ են պատճառել: Յետեւ Աժոյջիկը Տրախոմէոսի սպաներ հրացանի կամ ատրճանակի կրակոցով, ապա միանդամայն պարզ կլինէր սպանութեան գիտաւորութեան առկայութեանը: Ուրիշ բան է՝ վորոշ տարածութեան վրա շարտած քարով սպանութեան կատարելը: Այս դեպքում չի կարելի նախատեսել հենց մահ պատճառելը, վորովհետեւ վորոշ տարածութեան վրա շարտած քարով սպանելու համար հարկաւոր են բազումիկ հանգամանքներ, վորոնք նախատեսին անհնարին է: Քար շարտող Աժոյջիկը նախատեսում էր և պետք է նախատեսեր մարմնական ծանր վնասվածք պատճառելու հնարաւորութեանը, և հենց դրա համար, բայց վոչ գիտաւորյալ սպանութեան համար, նա պետք է կրի քրեական պատասխանատւութեան:

Համաձայն ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահի բողոքի, Քրեական գործերի դատական կոլեգիան Աժոյջիկի գործողութեանները վերաւորակեց ԲԽՍՀ Քրեական Որենսդրքի 219-րդ հոդ. «բ» կետով (գիտաւորյալ ծանր վնասվածքներ, վորոնց հաջորդել է մահը):

Քերած որինակներից յերևում է մի կողմից, թէ վորքան մեծ է հանցակազմի նրա բոլոր հատկանիշներով հանդերձ ճիշտ վերլուծութեան նշանակութեանը և, մյուս կողմից՝ հանցակազմի բոլոր հատկանիշների անքակտելի կապը, մեկ հատկանիշի ճիշտ հաստատման նշանակութեանը մյուս հատկանիշները ճիշտ հաստատելու և ձևակերպելու համար:

Աժոյջիկի գործի մեջ հանցակազմի որչեկտիվ կողմի ուսումնասիրութեանը նպաստում է նաև նրա սուբյեկտիվ

կողմի՝ հանցանքի ձևերի բացահայտմանը, ցույց տալով տվյալ հանգամանքներում գիտաւորյալ սպանութեան կատարելու անհնարինութեանը, և դրանով իսկ ոգնում է պարզել նաև հանցագործութեան որչեկտը:

Հարկ է միշտ նկատի ունենալ, վոր հանցակազմի բոլոր հատկանիշները միմյանց հետ անբաժանելի կապված են, նրանց չի կարելի մեխանիկորեն մեկը մյուսից անջատել, մեկուսացված բնարկել: Միայն միասին վերցրած, նրանք տալիս են լրիվ պատկերացում հանցագործութեան մասին ամբողջութեամբ վերցրած:

9. ՀԱՆՑԱԿԱԶՄԸ ՀԱՆՑԱՓՈՐԶԻ, ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ ՅԵՎ ՀԱՆՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՐՈՒՄ

Բացի բուն հանցակազմի հաստատումից, յուրաքանչյուր քրեական գործում անհրաժեշտ է պարզել այն, թէ արդյո՞ք հանցագործութեանն ալարտված էր, թէ այն արտահայտվում էր նախապատրաստման կամ հանցափորձի մեջ: Այդ հանգամանքների հաստատումը խոշոր նշանակութեան ունի հանցագործութեանը ճիշտ վորակելու և քրեական պատժի միջոցները վորոշելու համար: Միայն այդ հանգամանքների ճիշտ տահմանման դեպքում կարելի յե ճիշտ վորոշել նաև հանցագործութեան և հենց հանցագործի վտանգաւորութեան հարցը:

Համաձայն ՌԽՖՍՀ Քրեական Որենսդրքի 19-րդ հոդ. և միութենական մյուս հանրապետութեանների քրեական որենսդրքերի համապատասխան հոդվածների հանցափորձը և նախապատրաստութեանը հետապնդվում է նույնպէս, ինչպէս և ալարտված հանցագործութեանը, հաշիվ առնելով այն պատճառները, վորոնցով այդ հանցագործութեանը մինչև վերջը չի հասցված:

Կա՞ր արդյոք վորեւիցէ տարբերութեան նախապատրաստման հանցափորձի և ալարտված հանցագործութեան հանցակազմի միջև:

Այդ դեպքերի հանցակազմի մեջ, իհարկէ, տարբերութեան կա: Այն՝ առաւելապէս հանդում է հանցակազմի որչեկտիվ կողմի տարբերութեանը: Որչեկտիվ կողմից նա-

խաղաղության տուժյունն ու հանցափորձը տարբերվում են ավարտված հանցագործությունից նրանով, վոր նախապատրաստման և հանցափորձի ժամանակ բացակայում է հանցավոր հետևանքի վրա հասնելը: Որինակ՝ հանցագործը կրակում է իր զոհի վրա, բայց զենակը թռչում է մի կողմ, հանցագործից անկախ պատճառներով: Հանցագործն արել էր այն ամենը, ինչ հարկավոր էր համարել, բայց հանցավոր հետևանքը վրա չի հասել: Ինչպիսիք որինակում սպանություն մահափորձ կլինի: Ավարտված հանցագործություն և մահափորձի միջև ամբողջ տարբերությունը, այսպիսով, հանգում է հանցավոր գործունեություն հետևանքների բացակայությունը: Փոխում է արդյոք դա հանցակազմի հանգամանքները: Հանցակազմի որոշակի կողմում կրացակայի մեկ հատկանիշ՝ հանցավոր հետևանքը: Սակայն այդ հանգամանքն ամենևին չի փոխի հանցակազմն ամբողջությամբ վերցրած: Հանցակազմն առկա կլինի: Հանցագործությունը՝ սպանություն մահափորձի ղեկավարում կվորակվի ՌՆՖՍՀ Գր. Որ. 136-րդ հոդվածով, կերտելով Գր. Որ. 19-րդ հոդվածը: Ինչպես մատնանշվեց վերևում, որենքը (ՌՆՖՍՀ Գրեական Որենագրքի 19-րդ հոդվածը) մատնացույց է անում, վոր դատարանն այդպիսի ղեկավարում պատժի չափն ընտրելու ժամանակ պետք է ղեկավարվի այն անձնավորությունների անտիմանով, վորը կատարել է հանցափորձը կամ նախապատրաստությունը, հանցագործության նախապատրաստված լինելու անտիմանով և նրա հետևանքների մոտիկությունը, ինչպես նաև այն պատճառների քննարկումով, վորոնց հետևանքով հանցագործությունը մինչև վերջ չի հասցվել:

Այնուհետև ՌՆՖՍՀ Գր. Որ. 19-րդ հոդվածի մեջ ասված է՝ «Այն ղեկավարում, յերբ հանցագործությունը տեղի չի ունեցել այդպիսին կատարելու համար մտադրված անձի ինքնակամ հրատարակելու հետևանքով, դատարանը նշանակում է համապատասխան պատժամիջոց այն գործողությունների համար, վորոնք փաստորեն կատարվել են հանցափորձ կատարողի, կամ նախապատրաստողի կողմից»: Հետևաբար կամովին կերպով հրատարակելու ղեկավարում»

ի տարբերություն ավարտված հանցագործությունից, հանցակազմ կլինի միայն այն ղեկավարում, յերբ կատարված գործողություններն ինքնակամ ընդհատված են և վորելից հանցակազմ, որինակ՝ ուժեղ գործող թույլների ձեռքբերում և պահպանում, ապրիլի կերպով ղենք ձեռք բերելը և այլն:

«Յեւ նախապատրաստությունը, և հանցափորձը, ասված է ՌՆՖՍՀ Արդարադատության և Գերազույն դատարանի 1926 թ. դեկտեմբերի նամակի մեջ, հավասարապես հետևյալում են պատժի միջոցների կիրառումը, վորչափով վոր նրանց մեջ յերևան է վարչա անձնավորություն սոցիալական վտանգավորությունը: Սակայն հարկ է ընդգծել, վոր հանցագործության նախապատրաստման համար պատժի միջոցների կիրառումը կարող է տեղի ունենալ միայն այն ղեկավարում, յերբ հանցագործությունը նախապատրաստական գործողությունները ձուլվել են հանցավոր ղեկավարություն կրականացման վորոշակի կոնկրետ ձևի մեջ, ուստի և հանդիսանում են սոցիալապես վտանգավոր»: Նշված նամակի մեջ միանգամայն ձեռք կերպով ընդգծվում է հանցանքը՝ վորոշակի կոնկրետ գործողություններում յերևան հանելու անհրատեղությունը, վորոնք ցույց են տալիս հանցավոր ղեկավարություն կրականացման սկիզբը: Մարդ կարող է խորհել հանցագործությունը, նույնիսկ վորոշել այն կատարելու, բայց հետո հրատարակել սկզբնական մտադրությունից: Այդ ղեկավարում նրան չի կարելի քրեական պատասխանատվության յենթարկել, վորովհետև վորպես սոսկ ղեկավարություն, վորը յերևան չի յեկել արտաքինապես վորոշելու բանի, վորոշակի հանցավոր արարքի մեջ, սրտոժելի չէ: Ինչպես որինակը այնպիսի անգամ ցույց է տալիս, թե ինչպիսի սերտ կապակցություն մեջ են դառնում հանցակազմի բոլոր հատկանիշները և մասնավորապես նրա որոշակի և սուբյեկտիվ կողմերը:

Հանցավոր գործունեություն հետևողի վերլուծություն ժամանակ խոշոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե հանցագործությունը մի մարդու միջոցով է կատարվել, թե ուրիշ մարդկանց մասնակցությունով: Հատկանալի յե,

վոր միջանի մարդկանց միջոցով կատարված հանցագործութունն ավելի վտանգավոր է, քան մի մարդու միջոցով կատարված հանցագործութունը: Հանցակցության ժամանակ կա հանցագործների հանցավոր վորոչ կազմակերպվածութուն և համախմբվածութուն, վորն անկասկած իրենից ե'լ ավելի խոչոր վտանգ է ներկայացնում սոցիալիստական հասարակության համար: Հանցակցության վերլուծության ժամանակ հարկավոր է հիշել, վոր որենքը (ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքի 10-րդ հոդ.) պահանջում է հանցակիցներից յուրաքանչյուրի վերաբերմամբ հաստատել նրա անհատական հանցանքը: Հանցակիցներից յուրաքանչյուրի վերաբերմամբ պատժի միջոցը կիրառվում է ինչպես տվյալ հանցագործությանը նրա ունեցած մասնակցության աստիճանից, այնպես էլ այդ հանցագործության և նրան մասնակցած տվյալ անձնավորության վտանգավորությունից: (ՌՍՖՍՀ Քրեական Օրենսգրքի հոդ. հոդ. 17, 18):

ԳԼՈՒԽ II

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՃԻՇՏ ՎՈՐԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՃԻՇՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃԻՇՏ ՎՈՐԱԿԱՄԱՆ ՀԱՄԱՐ

ժողովրդական դատարանների սլրակտիկայի մեջ առանձին դեպքերում նկատվում է ձգտում՝ այն գործերի առթիվ, վորոնք հասարակական-քաղաքական նշանակութուն ունեն, կայացնել ավելի խիստ դատավճիռ, իսկ դրա համար հենց փնտռել ավելի խիստ համապատասխան հոդված, թեև Քրեական Օրենսգրքում կա հոդված, վորն ուղղակի կերպով նախատեսում է տվյալ հանցագործութունը:

Այդպիսի սլրակտիկան վոչ այլ ինչ է, քան որենքի ուղղակի խախտում և բացի վնասից վոչինչ չի կարող

բերել: Նման կարգի որինակներ մենք ամենից առաջ գրտնում ենք սպեկուլացիայի վերաբերյալ գործերում (ՌՍՖՍՀ Քրեական Օրենսգրքի 107-րդ հոդ.): Համառոտակի վերլուծենք այն հանցակազմը, վոր նախատեսված է Քրեական Օրենսգրքի 107-րդ հոդվածում: Հանցագործության որյեկտը հանդիսանում է խորհրդային առևտուրը: Սուբյեկտ՝ ամեն մի մեղսագիտակ անձնավորութուն, վորը հասել է 16-ամյա հասակի. որյեկտիվ կողմն արտահայտվում է գյուղատնտեսության և մասսայական սպառման միջոցների գնման և վաճառման մեջ. սուբյեկտիվ կողմը՝ ուղղակի գիտավորութունն ու շահ ստանալու նպատակներն են: Սպեկուլացիայի կազմի առկայության համար անհրաժեշտ է հաստատել այդ բոլոր հատկանիշները:

Իսկ ի՞նչ են անում առանձին դատարանները: Վերջներք միջանի որինակներ: Լենինգրադի մարզի Կինգիսեպոլի ռայոնի ժողովրդական դատարանը 1937 թ. հոկտեմբերի 8-ին ըստ Քրեական Օրենսգրքի 107-րդ հոդվածի՝ 6 ամսով ազատազրկման դատապարտեց Պ. Կալինինին, 5-ական ամսով ազատազրկման՝ Վ. Տոկարեվին, Ա. Կալինինային, Լ. Տոկարեվային, Կրիկովին, Գավրիլովին: Բոլոր դատապարտվածները, համաձայն դատավճիռի, զբաղվում էին կարտոֆիլ գնելով և վերավաճառելով: Գատավճիռը մատնանշում է, վոր հունիս ամսին Պ. Կալինինը Սպառնիության մեքենայով Լենինգրադ է բերել 8 պարկ կարտոֆիլ և յուրաքանչյուր պարկը վաճառել է 35 ռուբլով: Այնուհետև նա Կինգիսեպոլ քաղաքում գնել է 6 պարկ՝ յուրաքանչյուր պարկը 15-ական ռուբլով՝ Լենինգրադում վաճառելու համար, հետը բերել է կնոջը, ինչպես նաև Տոկարեվին՝ իր կնոջ հետ, վորն իր հետ՝ բերել է 9 պարկ կարտոֆիլ: Նրանք Լենինգրադում կարտոֆիլը վաճառել են պարկը 35 ռուբլով:

Գատավճիռը կարտոֆիլ գնելու և վաճառելու ելի միջանի դեպքեր է բերում: Կալինինը ընդամենը վաճառել է 14 պարկ կարտոֆիլ, վորոնց համար 280 ռուբլի արդյունք է ստացել: Կրիկովին ու Գավրիլովը հանցավոր են ճանաչված այն բանում, վոր լինելով ռեֆերներ, Սպառնիության

մեքենայով կարտոֆիլը տեղափոխել են Լենինգրադ՝ վաճառելու, վորով նպատակը և՛ սպիկուլացիային:

Լենինգրադի մարզային դատարանի 1937 թ. հոկտեմբերի 15-ի վճռով Գալլրիլովի և Կրիկովի գործողությունները վերալուրակավորվել են Քրեական Որենսգրքի 169-րդ հոդ. 2-րդ մասով և նրանց պատիժը իջեցվել է մինչև 2 տարվա ազատազրկման՝ յուրաքանչյուրին:

Գատալարության ժամանակ ճշտորեն պարզվել է, վոր Կրիկովին ու Գալլրիլովը Կալինինների և Տոկարեվների կարտոֆիլը ձրխարար են տեղափոխել: Կալինինան և Տոկարեվյան տնային տնտեսուհիներ են—կարտոֆիլը վաճառում էլին իրենց սովետականներին ցուցումներով և ազդեցության տակ: Կալինինան ու Տոկարեվյան ծանրաբեռնված են փոքրահասակ յերեխաներով, առաջ չեն դատվել: Տոկարեվները վերաբերմամբ հաստատվել են, վոր նրանք կարտոֆիլը վաճառում էլին իրենց բանջարանոցից, իսկ յերբ առաջին անգամ Կինգրիսեպով գնել են 9 պարկ կարտոֆիլ՝ այդպիսին վերալաճառելու նպատակով, այս նրանք բռնվել են:

Սմենից առաջ քնննք, թե արդյո՞ք շոֆերներ Գալլրիլովի և Կրիկովի գործողություններում հանցակազմ կա թե վոչ: Վոչ որչեկտիվ կողմից՝ «գնում—վերավաճառում», վոչ էլ սուբյեկտիվ կողմից՝ «չահույթի նպատակ»—Գալլրիլովի և Կրիկովի գործողություններում աջակիսի հանցակազմ չկա, վորպիսին նախատեսված է Քրեական Որենսգրքի 107-րդ հոդվածում: Հանցակազմ չկա նաև Քրեական Որենսգրքի 169-րդ հոդ. 2-րդ մասով, վորովհետև խարտության կազմը պահանջում է խարեյություն և իրային ոգուտներ ստանալ: Վոչ այն, վոչ մյուսը ներկա դեպքում չի յեղել: Մյուս դատապարտվածների գործողություններում նույնպես բացակայում է Քրեական Որենսգրքի 107-րդ հոդվածի կազմը, վորովհետև որչեկտիվ կողմից սպիկուլացիան պահանջում է գնում և վերավաճառում շահույթի նպատակով, վորպիսին ներկա դեպքում դեռևս հաստատված չի յեղել:

Գատապարտվածների գործողություններում կան ուրիշ

հանցակազմի հատկանիշներ՝ առևտրի սահմանված կանոնների խախտում (ՌեՅՍՀ Քրեական Որենսգրքի 105-րդ հոդ.): ՈՍՀ Միության Գերագույն դատարանի Նախագահի բողոքով այդ գործը հսկողության կարգով քննելով, ՌեՅՍՀ Գերագույն դատարանը կայացրեց միանգամայն ճիշտ հետևյալ վորոշումը. «Գալլրիլովի և Կրիկովի վերաբերմամբ դատարանի հանած վճիռը ճիշտ չէ. նույնպես ճիշտ չէ քրեական վճարեկ կոլեգիան իր վորոշման մեջ՝ նրանց գործողությունները վորակելով Քրեական Որենսգրքի 169-րդ հոդ. 2-րդ մասով:

Գործի նյութերից նրանց գործողություններում քրեական հանցակազմ չի նկատվում: Գալլրիլովին ու Կրիկովը, հանդիսանալով Սպատմության շոֆերներ, գտնվում էլին Կալինինի յենթարկության մեջ, նրա կողմից ոգտագործվել են անձնական շահամոլական նպատակներով Կալինինի և Տոկարեվի կարտոֆիլը տեղափոխելու ժամանակ: Իրա համար Գալլրիլովին ու Կրիկովը նյութական վոչ մի վարձատրություն նրանցից չեն ստացել, ուստի և Գալլրիլովի և Կրիկովի վերաբերմամբ դատավճիռը յենթակա յե վերացման: Կալինինայի և Տոկարեվների վերաբերմամբ ճիշտ չեն դատարանն ու քրեական—վճարեկ կոլեգիան՝ նրանց գործողությունը վորակելով Քրեական Որենսգրքի 107-րդ հոդվածով, վորովհետև Տոկարեվները, ինչպես հաստատված է գործով, կարտոֆիլը վաճառել են իրենց բանջարանոցից և առաջին անգամ Կինգրիսեպով քաղաքում գնել են 9 պարկ կարտոֆիլ վերավաճառելու նպատակով, վորի համար էլ բռնվել են, Կալինինան, լինելով տնային տնտեսուհի, կարտոֆիլը վաճառել է իր սովետնու ազդեցության տակ: Այդ հանգամանքների հիման վրա նրանց գործողություններն ընկնում են Քրեական որենսգրքի 105-րդ հոդ. 1-ին մասի տակ:

Յեթի դատարանը ինչպես հարկն է վերլուծեր հանցակազմը, նա, իհարկե, չեր կիրառի 107-րդ հոդվածը, և մարդիկ քրեական պատասխանատվության չեյին կանչվի, չեր խախտվի քրեական որենքը: Ներկա դեպքում վոչ—ճիշտ հաստատված կազմը հետևյալ է վոչ—ճիշտ վորակում,

Իսկ դրանից ել բոլոր մնասակար հետևանքներն ինչպես սոցիալիստական պետութեան համար, այնպես ել մեղադրյալների համար: Շատ հաճախ դատական պրակտիկայում յեղել են սպեկուլացիայի համար Քրեական Որենսդրքի 107-րդ հոդվածով դատապարտելու դեպքեր միայն այն բանի հիման վրա, վոր այս կամ այն անձնախորութեան մոտ հայտարեել են լայն սպառման վորեւե ապրանքների նշանակելի քանակութեան: Սակայն սպեկուլացիայի կազմի առկայութեան համար այդ հատկանիշը միանգամայն բավարար չէ, հարկավոր է հաստատել այդ կազմի բոլոր հատկանիշները:

Մյուս կողմից, նկատվում են հակառակ բնույթի դեպքեր, յերբ սպեկուլացիայի կազմի առկայութեան դեպքում դատարանը չափազանց ներողամտորեն է վերաբերվում սպեկուլանտներին: Այսպես, որինակ, Կրասնոդարյեյսկու 83-րդ տեղամասի ժողովրդական դատարանը Պրիմակ սպեկուլանտների վերաբերմամբ կիրառեց պայմանական դատապարտում, սպեկուլանտներ, վորոնք 1934 թ. սխտեմատիկաբար գրառվել են Լենինգրադի խանութներում մանուֆակտուրա և թել գնելով և այդ ապրանքները կորստան քաղաքում սպեկուլանտ Ռերլատին վաճառելով, վորչի սերմի սխտեմատիկ սպեկուլացիայի համար Գորբուտովը Ուստյուժենի ռայոնի ժողովրդական դատարանի կողմից Քրեական Որենսդրքի 107-րդ հոդվածով դատապարտվել է 700 ռուբլի տուգանքի և այն:

Հանցակազմի վերլուծութեան տեսակետից ցուցադրական է ելեկտրոմոնայոր Սլաշկովսկու գործը:

Վրտերակ քաղաքի 3-րդ շրջանի ժողդատարանը Սլաշկովսկուն մեղավոր ճանաչեց այն բանում, վոր ԽՍՀՄ գանդան քաղաքներում տարբեր հիմնարկների և կազմակերպութեանների հետ կնքած պայմանագրերով, սկսած 1933 թվից, նա կատարում էր ելեկտրոհաշիջների և տրանսֆորմատորների տեղակայում (установка): 1933 թվից մինչև 1936 թ. ոգտատուր Սլաշկովսկին կնքել է այդպիսի պայմանագրեր 45.600 ռուբլու: Բացի դրանից, Սլաշկովսկին իր գործակալներին հաշիվներ էր գուրս գրում «Элек-

троустановка силовых счетчиков С.Г.Ф.» շտամպ ունեցող բլանկների վրա: Վերջին յերեք տառերը նշանակում էին Սլաշկովսկու ինիցիալները: Հաշիվների և տրանսֆորմատորների վերալաճառումով Սլաշկովսկին չի դրադվել, և դրանում նրան վորջ վորջ չի մեղադրել:

Սլաշկովսկու գործողութեանները ժողովրդական դատարանը վորակել է վորպես սպեկուլացիա: Իսկ Սլաշկովսկու գործողութեաններում չկա հիմնական հատկանիշը՝ գնում՝ վերալաճառելու համար: Սլաշկովսկին գնում էր այնքան հաշիվներ, վորքան նրան հարկավոր էր պետհիմնարկների հետ կնքած պայմանագրերով նշված աշխատանքները կատարելու համար և միայն այդ աշխատանքները կատարելու համար: Գործի նյութերից յերևում է, վոր Սլաշկովսկին Ֆինանսական որդաններից թազցրել է իր ներկա արհեստը և իր յեկամուտները և յեկամային հարկը վճարել է վորպես բանվոր ամսական 300 ռուբլու աշխատավարձից: Հարկման որյեկաները թազցնելու համար Սլաշկովսկուն հարկավոր էր առաջադրել մեղադրանք ըստ ԲՆՍՀ Քրեական Որենսդրքի՝ 92-րդ հոդվածի «ա» կետի: Հիշատակված շտամպով բլանկների վրա հաշիվներ գուրս գրելու փաստի մեջ հանցագործութեան հատկանիշներ չկան, վորովհետև այդ բլանկները՝ իր գործակալներին խարելու նպատակով ոգտագործելու վորջ մի դեպք չի հաստատված: Ընդհակառակը, գործին կցված աշխատանքային բոլոր պայմանագրերից յերևում է, վոր Սլաշկովսկին պայմանագրեր կնքել է միայն իր անունից: ԽՍՀՄ Գերագույն դատարանը Սլաշկովսկու գործողութեանները վերալորակեց 155-րդ հոդվածից (սպեկուլացիա) ԲՆՍՀ Քրեական Որենսդրքի 92-րդ հոդ. «ա» կետով և նրա պատիժը իջեցրեց մինչև 1 տարվա ուղղիչ-աշխատանքային աշխատանքների ընդհանուր հիմունքներով:

Սլաշկովսկու հանցագործութեան սխալ վորակումը տեղի ունեցավ այն պատճառով, վոր սխալ էր պարզված հանցակազմը:

Դատարանը մանրամասն իրախաբանական վերլուծութեան չի յենթարկել Սլաշկովսկու արարքը, ուստի և չի

Հաստատել իսկական հանցակազմը և սխալ և վորակել մեղադրյալի գործողությունը:

Վերջին որինակը: Կոլտնտեսական Նիկոլայեվը, ունենալով վորսորդական հրացան, հանգստյան օրը վճռել էր ուղևորվել վորսի: Նրա մոտ տուն և յեկել Ֆեդորովը: Կոլտնտեսականները ծխել և զրուցել են: Ֆեդորովը, ինքը լինելով վորսորդ, վերցրել է հրացանը, նշան է բռնել միջնապատին, իսկ հետո Նիկոլայեվին հարցրել է: «Հրացանը Երա՞ծ է թե վոչ»: Նիկոլայեվը պատասխանել է, «Կարծեմ, վոչ»: Ֆեդորովը իջեցրել է ձգանը, լսվել է կրակոց, և Նիկոլայեվը տեղնուտեղը սպանվել է: Գործով Հաստատված է, վոր Նիկոլայեվն ու Ֆեդորովն ապրում էյին քաղաքի կերպով Համերաչխ: Ֆեդորովը սպանություն վոչ մի նպատակ և առիթ չի ունեցել:

Քննարկենք այդ կազմը: Հանցադործություն օրյեկտ հանդիսացավ կոլտնտեսական Նիկոլայեվի կյանքը, սուբյեկտ՝ կոլտնտեսական Ֆեդորովը, օրյեկտիվ կողմը՝ արտահայտվեց մոտիկ տարածություն վրա Նիկոլայեվի վրա վորսորդական հրացանից արձակած կրակոցի մեջ, վորը իր հետևից բերել է Նիկոլայեվի մահը, սուբյեկտիվ կողմը՝ անզուգույն առկայությունը (հանցավոր անվություն):

Ինչպես պետք է վորակել տվյալ հանցադործությունը: Հարկավոր է այն վորակել միայն ՌԽՖՍՀ Քրեական Որենսդրքի 139-րդ հոդվածով (անզուգույն սպանություն):

2. ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Քրեական դործերի վորակման սխալները պրակտիկալում նշանակելի չափով բղխում են հանցակազմի վոչ-ճիշտ հաստատումից, այս կամ այն կազմը իրավարանական ճիշտ և մանրամասն վերլուծելու անկարողությունից:

Հանցակազմի ճիշտ իրավարանական վերլուծությունը հանդիսանում է ճիշտ վորակման անհրաժեշտ և վնասկան պայմանը:

Յուրաքանչյուր հանցադործություն ճիշտ վորակելու

համար անհրաժեշտ է, ինչպես արդեն վերևում մատնանըլ-վեց, հաստատել կազմի բոլոր հատկանիշները:

Բերած բոլոր դեպքերում խախտվել էր սոցիալիստական քրեական օրենքը, իսկ դատավճիռը, վոր կայացվել է օրենքը խախտելով, վոչ միայն չի հասնում այն նպատակներին, վոր հետապնդում է սոցիալիստական արդարադատությունը, այլ քայքայում է դատարանի հեղինակությունը: Հայտնի յե, վոր պատիժը սոցիալիստական քրեական իրավունքի մեջ հետապնդում է, մի կողմից, հանցագործություն կատարած անձնավորություն վրա ներգործելու նպատակ (պատիժ, ուղղում, դատարանականություն), և, մյուս կողմից, մյուս անկալուն անձնավորություններին ներգործելու նպատակ: Հասկանալի յե, վոր օրենքի խախտումով հանված դատավճիռը չի կարող անհրաժեշտ ներգործություն ցույց տալ: Վերևում բերված դեպքերում դատարանը վճռական հարվածը չի ուղղել իսկական սպեկուլանտների դեմ, այլ քրեական սպեկուլանտի ամբողջ ուժով հարձակվել է առևտրի կանոնները պատահականորեն խախտողների վրա: Այդպիսի պրակտիկան կարող է միայն վնասել խորհրդային քրեական արդարադատությանը և անուղղելի վնաս հասցնել աշխատավորների իրավունքներին ու շահերին:

Յեթե դատարանը վերևում բերված բոլոր դեպքերում մանրամասն վերլուծեք հանցակազմը, իհարկե, տեղի չեն ունենա քրեական դործերի վոչ-ճիշտ վորակում, վորն իր հետևից բերեք բացասական հետևանքներ: Հայտնի յե, վոր ժողովրդի մերկացված թշնամիներ իմաստակար դրույթ-դատական աշխատողներին: Ժողովրդի թշնամիներն առաջարկում էյին առանց խորություն քրեական պատասխանատվության յենթարկել ամեն մի գործողություն համար, վորն արտաքնապես հանցավոր էր ներկայանում, առանց ճշտորեն հաստատելու հանցակազմը: Այդ կարգի դրույթներով ժողովրդի թշնամիները ձգտում էյին վարկաբեկել դատարանը, կազմալուծել նրա գործունեությունը, զիգոհություն առաջացնել աշխատավորների մեջ, կոմու-

նիզմի հետագա հաղթանակի համար մղվող պայքարում սոցիալիստական պետութեան ձեռքից դուրս հանել այնպիսի սուր և կարևոր գործիք, վորպիսին սոցիալիստական արդարագատութեանն է:

Խորհրդային դատարանը կոչված է անողորքաբար պայքարելու որենքները խախտողներին դեմ, ժողովրդի թշնամիներին և այլ ամեն տեսակի հանցագործներին դեմ: Խորհրդային դատարանն իր ամբողջ գործունեությունը մեջ պետք է սրբութեամբ պահպանի որենքները: Ամեն մի դատավոր պետք է հաստատ կերպով յուրացնի հանցակազմի ուսմունքը, հանցակազմը ճիշտ ըմբռնելը, պետք է ձգտի բոլոր դեպքերում տալու հանցագործություն ճիշտ վորակումը:

Այդ յերաչխիք կլինի այն բանի, վոր վոչ մի դեպքում ժողովրդի թշնամիներին գործողությունն անպատիժ չի մնա, այդ յերաչխիք է նաև այն բանի, վոր որենքով պաշտպանված քաղաքացիներին իրավունքները չեն խախտվի և վոր հանցագործը կկրի արժանի պատիժը հենց այն հանցագործության համար, վորը նա յե կատարել, ճշտորեն համապատասխան այդ հանցագործության համար Գրեական Որենսդրությամբ նախատեսված հոդվածներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳՎՈՒՆ I. ՀԱՆՅԱԿԱԶՄԻ ԸՄԲՈՆՈՒՄՆ ԸՍՏ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԻՒՄԻ

1. Հանցակազմի հատկացությունը	6
2. Ընդհանուր հանցակազմի հատկանիշները	6
3. Հանցագործության որակիտը	7
4. Հանցագործության սուբյեկտը	9
5. Հանցագործության որակիտիվ հատկանիշները	12
6. Հանցագործության սուբյեկտիվ կողմը	14
7. Հանցագործության զրգապատճառը և նպատակը	19
8. Քրեական իրավունքի Ընդհանուր ու Հատուկ մասերը և հանցակազմը	20
9. Հանցակազմ հանցավորձի նախապատրաստման և հանցակցություն ժամանակ	29

ԳՎՈՒՆ II. ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՃԻՇՏ ՎՈՐԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

1. Հանցակազմի ճիշտ վերլուծության նշանակությունը հանցագործության ճիշտ վորակման համար	32
2. Յեղրակացություն	38



Պատ. խմբագիր Բ. Քալանթարյան
Թարգմանիչ Խ. Փորտուղյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Զենյան
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Աբովյան

Գլավիճախ լրագր. վ. 1228, պատվեր № 210, տիրած 1000
Հանձնված և արտադրության 3/VII 1940 թ.
Ստորագրված և ապագրելու 7/VIII 1940 թ.
Գինը 90 կոպ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան,
Յերևան, Ալլահվերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0221155

ԳԻՆԸ 90 ԿՈՊ.

А. В. ЛАПТЕВ

СОСТАВ ПРЕСТУПЛЕНИЯ
И КВАЛИФИКАЦИЯ УГОЛОВНЫХ ДЕЛ

Издание Наркомюста Арм. ССР.

Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65.

36.109